

Լուսինե Թասայան

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ակադեմիայի դասախոս,
Երևանի «Գլաձոր» համալսարանի հայցորդ

ԱՌՑԱՆՑ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ /ORD/

Սույն հոդվածը նվիրված է առցանց հաշտարարությանը, նաև՝ արբիտրաժին, որոնք օգտագործվում են ֆիզիկական և /կամ/ իրավաբանական անձանց վեճերի այլընտրանքային /ոչ դատական/ լուծման համար, այսինքն՝ առցանց բանակցություններին: Աշխատանքը կատարելիս ուսումնասիրվել է ԱՄՆ-ի, Եվրոպայի խորհրդի անդամ երկրների և Ռուսաստանի Դաշնությունում առկա առցանց հաշտարարության ոլորտները, նաև կատարվել է համապարփակ վերլուծություններ:

Հիմնարարներ- վեճերի այլընտրանքային լուծում, հաշտարար, առցանց, արբիտրաժ:

Չարգասած իրավական համակարգ ունեցող երկրներում վաղուց ի վեր իրավունքի պաշտպանության բնագավառում իրենց ուրույն տեղն ունեն վեճերի լուծման այլընտրանքային (Alternative Dispute Resolution¹) ծառայությունները: Ավելի հստակ՝ XX դարում վեճերի լուծման այլընտրանքային (ոչ դատական) միջոցների դերը գերակշռում էր միջազգային առևտրային վեճերի լուծման ոլորտում, իսկ XI դարասկզբին դա հիմք հանդիսացավ վեճերի այլընտրանքային լուծման միջազգային իրավական կառուցվածքային (մեխանիզմների) ձևավորման, ինչպես նաև՝ առցանց (Online Dispute Resolution²) հաշտարարություն և արբիտրաժ (իրավասություն) իրականացնելու համար:

Առցանց հաշտարարություն կամ արբիտրաժը ողջ աշխարհում վաղուց առաջարկում են ADR ծառայություններ մատուցող զարգացած ընկերությունները իրենց կայքերի միջոցով և որպես կանոն, այդ ծառայությունները դասակարգվում են երկու տեսակի՝

- 1) կույր առևտրային վեճեր և
- 2) այդ վեճերի հիման վրա քննարկումներ³:

Կույր առևտրի հարթակները, որոնք են Cybersettle, CyberSolve, ClickNsettle և Settlement-ը առցանց ծառայություն մատուցողները, կարող են օգնել կողմերին լուծել վեճը, երբ միակ հարցը վերաբերում է «որքան կամ ինչպես» հարցադրմանը: Այս կայքերը չեն պատասխանում «ով է պատասխանատու» հարցին, իսկ դրանցում նախատեսված ծառայության վճարը կրկին առցանց է կատարվում: Այնուհետև ծառայությունը սկսում է հայտն ընդունել, երկու կողմերին տրամադրում է իր գաղտնաբառով պաշտպանված կայքում հարթակ: Ծրագրային ապահովումը պաշտպանում է յուրաքանչյուր կողմի դիմումը՝ մյուս կողմից գաղտնիության սկզբունքից ելնելով տեղեկատվություն չի հրապարակում, միայն հայտնում է մյուս կողմին:

Այս ծրագրի քննարկման արդյունքի հիման վրա մշակումը նաև մատչելի է համացանցի առցանց հաշտարար⁴ (Online Mediators) կայքում: Առցանց հաշտարարությունն օգտակար է նախ նրանով, որ ավելի քան հարյուր կամ հազար մղոն հեռավորության վրա կարող են ծառայություններ մատուցվել: Այս տարբերակով կարող են նաև վերացնել կողմնակալությունը (կախված ռասայից, տարիքից, սեռից կամ հաշմանդամությունից): Մյուս կողմից, դրա արդյունավետությունը պայմանավորվում է նախ նրանով, որ չի կարող նպաստել նաև հաշտարարի զգացմունքայնության վրա, այլ արդյունավետ կերպով կգրավի հաշտարարին կենտրոնալ միայն գործընթացի վրա:

Ներկայումս առցանց հաշտարարության նկատմամբ բավականաչափ մեծ է հետաքրքրությունը: ԱՄՆ-ում մի շարք առցանց հաշտարարություն մատուցող ընկերություններ կան: Եվրոպայում ևս գործում է առցանց հաշտարարությունը և որպես մոդել կիրառվում է հոլանդական էլեկտրոնային հաշտարարության ձևը, որը մեկնարկվել է բրիտանական էլեկտրոնային առցանց հաշտարարությունից հետո⁵:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և վեճերի լուծման կենտրոնը Մասաչուսեթսի համալսարանում 1999 թվականին անցկացրեց ուսումնասիրության ծրագիր՝ պարզելու, թե համացանցային հաշտարարությունը, որքան արդյունավետ կարող է լուծել վեճերը, որոնք առաջանում են առցանց աճուրդից, գործարքներից, և որոնք իրենց բնույթով գնորդների և վաճառողների հետ կապված վեճեր են:

Առցանց հաշտարարության մասով հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցային հաշտարարությունը մի շարք դեպքերում հաջող է մեկնարկվում հաշտարարների բանակցության միջոցով:

Առցանց միջնորդությունը տեղի է ունենում վիրտուալ իրականության մեջ, որտեղ վեճի կողմերի և հաշտարարի անուններն են նշվում, և նրանք իրականում չեն հանդիպում դեմ առ դեմ: Այսինքն՝ տեղեկատվական տեխնոլոգիաներին զուգընթաց զարգանում է նաև իրավական հարթակը, իսկ այս դեպքում՝ վեճերի լուծման այլընտրանքային միջոցի, այն է՝ հաշտարարության ձևը, ըստ որի մարդիկ անգամ աշխարհի տարբեր մասերում կարող են օգտվել առցանց հաշտարարությունից վեճի լուծման համար՝ օգտագործելով անվտանգ կոդավորված էլեկտրոնային փոստից կամ տեսազանգերից՝ որոշ դեպքերում անվտանգ գրուցարաններ հաղորդագրությունների միջոցով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և վեճերի լուծման կենտրոնները ներկայումս Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանում իրականացնում են աշխատանքներ «երրորդ կողմի» ծրագրային փաթեթ դիմումների վրա, որոնք առցանց ծրագրի շրջանակում նպաստում են կողմերի և հաշտարարի միջև փոխհամագործակցությանը⁶:

Առցանց հաշտարարության համակարգում տեղադրվում են համապատասխան էջեր, որտեղ կարող են մուտք գործել միայն իրավասություն ունեցող անձինք: Համակարգն ապահովված է հաշտարարի կամ հիմնականում՝ հաշտարարական կազմակերպության կողմից: Առցանց հաշտարարության գործընթացը շատ չի տարբերվում իրական հաշտարարության գործընթացից, բացառությամբ այն բանի, որ այնտեղ կապի այլ ձևեր են օգտագործվում:

Առցանց հաշտարարության առաջին քայլը առցանց տիրույթում հայտը ընդունելն է: Հաջորդ քայլն ընդհանուր է բոլոր հաշտարարական կազմակերպությունների համար: Նրանք կապ են հաստատում մյուս կողմի հետ պարզելու, թե արդյոք նրանք պատրաստ են մասնակցել առցանց հաշտարարության ընթացակարգին: Եթե բանակցության այս փուլը հարթ է ընթանում, ապա հաշտարարին (Online Mediators) ընտրում են կողմերը համատեղ կամ, եթե մյուս կողմը չի առարկում, նշանակվում է մյուս կողմի ընտրվածը և ըստ ընթացակարգի նա ձեռք է բերում հասանելիություն համապատասխան կայքէջում: Իսկ Եվրոպական հանձնաժողովը մշակել է Եվրոպական Փոքր Հայցերի ընթացակարգը (ESCP)⁷, որը ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարից: Այս ընթացակարգը նախատեսված է միջազգային վեճերի լուծման համար, որտեղ պահանջների չափը չի գերազանցում երկու հազար եվրո: Ըստ ESCP-ի, կարգավորումը գրավոր կերպով իրականացվում է տեղեկատվա-

կան և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ (էլեկտրոնային փոստ, վիդեոկոնֆերանս և այլն)⁸: ESCP-ի դրույթները հանձնարարական են և ոչ թե հրահանգներ, և ԵՄ անդամ պետությունները օգտվելով դրանից զարգացնում են առցանց վեճերի լուծման իրենց իրավական կանոնները: Այնուամենայնիվ, ESCP-ն սահմանում է որոշակի շրջանակ, որը կնպաստի առցանց դատական ընթացակարգերի իրականացմանը, ինչպես նաև կրթարժարացնի վեճերի լուծման այլընտրանքային վստահության ընդհանուր մակարդակը:

Ռուսաստանում առցանց հաշտարարությունն իր սկսնակ փուլում է: Մինչ օրս, սակայն ընկերությունների մի փոքր մասն է առաջարկում է RuNet-ի նման ծառայություն: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Ռուսաստանի հաշտարարության դասական տարբերակները դեռևս կատարյալ պահանջարկ չունեն Արևմուտքի համեմատ: Հաշտարարության և իրավունքի գիտական և մեթոդաբանական կենտրոնի նախագահ Ց.Ա. Շամլիկաշվիին կասկածի տակ է դնում առցանց միջնորդության արդյունավետությունը: Հայաստանի Հանրապետությունում առցանց հաշտարարությունից խոսելն անգամ վաղ է, սակայն իրատեսական, քանզի մեզանում դեռ դասական հաշտարարությունը սաղմնավորման փուլում է:

Վերը նշված այդ գործընթացին հաջորդում է բնականոն հաշտարարության գործընթաց միայն առցանց հարթակում, իսկ հաշտության համաձայնությունը հաստատվում է էլեկտրոնային ստորագրությամբ:

Գործնականում հաշտարարի համար շատ հետաքրքիր է հենց այդպես իրականացնել հաշտարարությունը: Ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռնում կողմերին ոչ միայն իրենց աշխատասենյակից կամ որևէ վայրից մասնակցել հաշտարարության գործընթացին, այլև հաշտարար ընտրել միջազգային հարթակից առանց համապատասխան երկիր մեկնելու, հաշտարարին հրավիրելու համար, լրացուցիչ ծախսեր կատարելուց կամ ավելի շատ վճարելուց:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ առցանց հարթակը առավել հնարավորություններ է ընձեռում վեճերի այլընտրանքային լուծման բնագավառում:

¹ Ալյունիտս՝ Alternative Dispute Resolution - ADR.

² Ալյունիտս՝ Online Dispute Resolution ODR.

³ Տե՛ս, K. Marquess, "Point, Click – Settle Quick!" ABA JOURNAL 82 (April 2000); E. Katsh, "The New Frontier: Online ADR Becoming a Global Priority," DISPUTE RESOL. MAG. 6 (Winter 2000); D. Eidsmoe, "Calling Their Bluff: Settlement Rates Low but Hopes Still High for Online Resolution of Personal Injury Claims," DISPUTE RESOL. MAG. 9 (Winter 2000); J. Melamed, "Mediating on the Interenet: Today and Tomorrow." www.mediate.com/articles/Melamed5.cfm 02.02.2018թ.:

⁴ Տե՛ս, For a description of some of these sites, see E. Katsh, supra at 7-8. See generally R. Bordone, "Electronic Online Dispute Resolution: A Systems Approach – Potential, Problems and a Proposal," 3 HARV. NEGOTIATION L. REV. 175 (Spring 1998); G. Friedman, "Alternative Dispute Resolution and Emerging Online Technologies: Challenges and Opportunities," 19 HASTINGS COMM/ENT. L.J. 694 (1997); E. Katsh, "Dispute Resolution in Cyberspace," 28 CONN. L. REV. 953 (Summer 1996); E. Lide, "ADR and Cyberspace: The Role of Alternative Dispute Resolution in Online Commerce, Intellectual Property and Defamation," 12 OHIO STATE J. ON DISP. RESOLUTION 193 (1996) 10.03.2018թ.:

⁵ Տե՛ս, www.e-mediation.nl and <http://www.consensus.uk.com/e-mediator.html> 22.03.2018թ.:

⁶ Տե՛ս, <http://aaron.sbs.umass.edu/center/projects.html> 28.03.2018թ.:

⁷ Տե՛ս, Regulation 861/2007/EC of the European Parliament and of the Council of 11 July 2007 establishing a European Small Claims Procedure O. J. (L. 199) 1. 19.04.2018թ.:

⁸ Տե՛ս, Архивированная копия (недоступная ссылка - история). Проверено 16 июня 2009. Архивировано 20 июля 2011 года. 18.06.2018г..

⁹ Տե՛ս, Интернет-интервью с Ц. А. Шамликашвили, президентом Научно-методического центра медиации и права: «Саморегулирование в медиации: новый этап интегрирования примирительных процедур в российское общество» 08.07.2018г..

Գրականության ցանկ

1. K. Marquess, "Point, Click – Settle Quick!" ABA JOURNAL 82 (April 2000); E. Katsh, "The New Frontier: Online ADR Becoming a Global Priority," DISPUTE RESOL. MAG. 6 (Winter 2000); D. Eidsmoe, "Calling Their Bluff: Settlement Rates Low but Hopes Still High for Online Resolution of Personal Injury Claims," DISPUTE RESOL. MAG. 9 (Winter 2000); J. Melamed, "Mediating on the Interenet: Today and Tomorrow." www.mediate.com/articles/Melamed5.cfm:

2. For a description of some of these sites, see E. Katsh, supra at 7-8. See generally R. Bordone, "Electronic Online Dispute Resolution: A Systems Approach – Potential, Problems and a Proposal," 3 HARV. NEGOTIATION L. REV. 175 (Spring 1998); G. Friedman, "Alternative Dispute Resolution and Emerging Online Technologies: Challenges and Opportunities," 19 HASTINGS COMM/ENT. L.J. 694 (1997); E. Katsh, "Dispute Resolution in Cyberspace," 28 CONN. L. REV. 953 (Summer 1996); E. Lide, "ADR and Cyberspace: The Role of Alternative Dispute Resolution in Online Commerce, Intellectual Property and Defamation," 12 OHIO STATE J. ON DISP. RESOLUTION 193 (1996):

3. www.mediate.com/articles/Melamed5.cfm:

4. www.e-mediation.nl and <http://www.consensus.uk.com/e-mediator.html>

5. <http://aaron.sbs.umass.edu/center/projects.html>:

6. Regulation 861/2007/EC of the European Parliament and of the Council of 11 July 2007 establishing a European Small Claims Procedure O. J. (L. 199) 1:

7. Архивированная копия (недоступная ссылка - история). Проверено 16 июня 2009. Архивировано 20 июля 2011 года.

8. Интернет-интервью с Ц. А. Шамликашвили, президентом Научно-методического центра медиации и права: «Саморегулирование в медиации: новый этап интегрирования примирительных процедур в российское общество»:

Լուսինե Կասալյան

Профессор Полицейского образовательного комплекса РА
Аспирант университета “Гладзор”

ОНЛАЙН-ПОСРЕДНИК /ORD/

Эта статья посвящена онлайн-посредничеству и арбитражу, которые используются для альтернативного / несудебного разрешения споров по естественным и / или правовым спорам, то есть онлайн-переговорам. В ходе исследования были изучены онлайн-сферы США, государств-членов Совета Европы и Российской Федерации, а также всесторонний анализ.

Ключевые слова: Альтернативное разрешение споров, медиатор, онлайн, арбитраж.

Lusine Tasalyan

Lecturer, Police Educational Complex of RA,
PhD student of the “Gladzor” University

ONLINE MEDIATION /ORD/

This article is devoted to online mediation and arbitration, which are used for alternative / non-judicial resolution of disputes over natural and / or legal disputes, that is, online negotiations. The study examined the online areas of the US, the member states of the Council of Europe and the Russian Federation, as well as a comprehensive analysis.

Key word: Alternative Dispute Resolution, mediator, online, arbitrage.